Արժեքավոր նամակները կարելի չե փոստը հանձնել բաց վիճակում, այսինքն՝ չփակցրած և չկնքված ծրարներում և այդ դեպքում դրանք կոչվում են «հայտարարված արժեքով բաց նամակներ» («открытые письма с объявленной ценностью»), և փակ վիճակում, այսինքն ուղարկողի կողմից կնքված. այդ դեպքում նրանք կոչվում են «հայտարարված արժեքով փակ նամակներ» («закрытые письма с объявленной ценностью»):

Արժեքավոր փակ նամակներ կարող են ուղարկել պետական հիմնարկութունները և կազմակերպութունները, իսկ բաց նամակներ, բոլոր ցանկացողները:

Արժեքավոր նամակի ծրարի վերևում, յերեսի կողմից, պետք է գրել. «արժեքավոր բաց, այսքան ռուբլու» («ценное открытое, на столько-то рублей») կամ «արժեքավոր փակ, այսքան ռուբլու» («ценное закрытое, на столько-то рублей»):

Ռուբլիների գումարը պետք է անպայման գրել թվանշաններով և տառերով:

Փակ և բաց նամակների հայտարարվող արժեքի չափը չի սահմանափակվում:

Ծրարի վրայի հասցեն պետք է գրել թանաքով, պարզ և մանրամասն: Վոչ մի ուղղում կամ ջնջում անել չի կարելի: Ուղղված հասցեներով նամակները չեն ընդունվում:

Հասցեն գրվում է հետևյալ ձևով (նկ. 20).

Ц	№ 250	Ценное открытое на 200 двести рублей МОСКВА, 9, ул. Горького, 26, кв. 62 Шейнину Ивану Семеновичу
	Раменское Московск.	
Раменское, Московской области, ул. Ленина дом 15, кв. 2. Назаров Павел Степанович.		

Նկ. 20. Արժեքավոր բաց նամակի հասցեյի ձևը

ԽՍՀ Միության դրամանիշներ արժեքավոր նամակներում կարող են ուղարկել միայն Ֆինստոյկոմատի, Պետբանկի որդանները և կապի ձեռնարկությունները:

Պետբանկի և Ֆինստոյկոմատի որդանների կողմից ուղարկվող արժեքավոր փակ նամակների ծրարների վրա պետք է նշել. «ներդրումը ստուգել ենք» («вложение проверяли»): Այս նշումը պետք է ստորագրված լինի տվյալ հիմնարկության յերկու պատասխանատու անձների կողմից:

Ուրիշ վայր ուղարկվող հայտարարված արժեքով նամակի քաշը պետք է լինի 8 կիլոգրամից վոչ ավելի, իսկ տեղական նամակներինը՝ 2 կիլոգրամից վոչ ավելի:

Հայտարարված արժեքով նամակներ ուղարկելու համար դանձվում է կշռվածք՝ հասարակ նամակների սակագնով և ապահովագրական վճար՝ դրամական փոխադրությունների սակագնով:

Հայտարարված արժեքով նամակները տուն հասցենիւ համար յուրաքանչյուր լրիվ կամ վոչ լրիվ 100 ուրբուց գանձվում է 20 կոպ:

Յեթե նամակը տուն հասցենիւ արժեքը վճարում է ուղարկողը, ապա ծրարի հասցեյի կողմում նշվում է «տեղ հասցենիւ արժեքը վճարված է» («доставка оплачена»):

Արժեքավոր բաց նամակ ուղարկողը պետք է կադմի ներդրման ցուցակ՝ մեկ կամ յերկու որինակից, հետևյալ ձևով (Նկ. 21):

Ցուցակը յերկու որինակից պետք է կադմել այն դեպքում, յերբ ուղարկողը ցանկանում է ունենալ ցուցակի պատճենը:

Ընդունողը պետք է ուղարկվող իրերը համեմատի ցուցակի հետ, ստուգի ընդհանուր գումարը և համոզվի, վոր ցուցակում ուղղումներ ու ջնշումներ չկան: Դրանից հետո ընդունողը ցուցակում ստորագրում է և խփում է որացուցային շտեմպեր: Ցուցակի յերկրորդ որինակը տրվում է ուղարկողին, իսկ առաջին որինակը ուղարկվող իրերի հետ միասին դրվում է նամակի մեջ:

Պարտատոմսերը և պետական տոկոսաբեր թղթերը գնահատ-

О П И С Ь			
вложения в открытое письмо с объявленной ценностью			
Куда		место назначения	
На имя			
№ по пор.	Количество предметов	Наименование предметов	Объявленная ценность страхового предмета
1	1	Счет Мосторга Иванову от 5/1 1938 г. за № 14/455 на 500 руб.	500 руб.
2	1	Профсоюзный билет № 01456, выданный союзом связи от 1/X 1936 г. на имя Иванова	5 руб.
3	1	Письмо	—
И т о г о . . .			505 руб.
Всего на пять рублей (сумма прописью)			
		Отправитель (подпись)	
		Проверил (подпись приемщика)	
К. Ш.		Никаких помамок и поправок не допускается	

Նկ. 21. Արժեքավոր բաց նամակների ներդրման ցուցակի ձևը

վում են իրենց անվանական դնով (այսինքն՝ հարյուր ուրբլիանոց պարտատոմսը պետք է գնահատել 100 ուրբլի):

Մնացած բոլոր առարկաները գնահատվում են ուղարկողի հայեցողությամբ, բայց առարկաների իսկական արժեքի սահմաններում: Վաճառքի արժեք չունեցող առարկաները պետք է գնահատել վոչ ավելի այն գումարից, ինչ գումարի վնաս վոր կարող է հասցենի ուղարկողին նամակի կորուստը, նրա վնասվելը և այլն:

Բացի գնահատված առարկաները, ծրարի մեջ կարելի յե դնել նամակներ և այլ թղթեր՝ առանց գնահատման: Այս նամակներն ու թղթերը նույնպես պետք է մտցնել ներդրման ցուցակի մեջ: Տվյալ դեպքում ցուցակի ապահովագրվող առարկայի «հայտարարված արժեք» («объявленная ценность») սյունակում այդպիսի առարկաների դիմաց պիժ է քաշվում:

Արժեքավոր բաց նամակ ընդունելիս աշխատողը պետք է

ստուգելի բոլոր արժեքներն ըստ ցուցակի: Արժեքները ցուցակի հետ միասին պետք է դնել ծրարի մեջ և կնքել փոստային հիմնարկի կնքամոմով: Կնիքների քանակը պետք է լինի այնքան, վորքան անհրաժեշտ է ներդրումն ապահով տեղ հասցնելու համար:

Հայտարարված արժեքով նամակները պետք է կշռել մինչև մեկ գրամի ճշտությամբ:

Քաջը պետք է գրել նամակի հակառակ կողմում և վավերացնել փոստային աշխատողի ստորագրությամբ:

Կապի բաժանմունքներում հայտարարված արժեքով ընդունված նամակները պատճենահան թղթի միջոցով գրանցվում են № 1 ձևի անդորրագրային ձևերի մեջ, իսկ գործակալությունների ընդունած նամակները՝ № 1-ա ձևի անդորրագրային գրքույկի մեջ: Անդորրագիրը (առաջին որինակը) պետք է տալ ուղարկողին, իսկ յերկրորդը պետք է պահել հիմնարկության մեջ: Անդորրագիրը պետք է ստորագրել (պատճենահան թղթի միջոցով) նամակ ընդունող աշխատակիցը (նկ. 22):

Ձև № 1

НКСвязи				СССР	
КВИТАНЦИЯ № _____					
В приеме _____					
особое назначение					
Налож. платеж Р. К.					
Ценность					
Куда					
Кому					
От кого и адрес					
Вес	С б о р ы				Всего
	Весовой	Страховой	За налож. плат.		
Принял _____					
подпись					

Նկ. 22. № 1 ձևի անդորրագիր

Բաժանմունքները և գրասենյակները անդորրագրերի համարակալումը կատարում են ամսե-ամիս, իսկ գործակալությունները՝ մինչև գրքույկը լիովին վերջանա: Նոր գրքույկում համարակալումը պետք է սկսել առաջին համարից:

Կապի բաժանմունքներն արժեքավոր նամակներն ուղարկում են № 11-ա ձևի ռեկտանգրի հետ միասին՝ փոստ-պակետի մեջ: Փոստ-պակետը գրանցվում է № 16 ձևի ընդհանուր մեջ:

Հայտարարված արժեքով նամակները գործակալություններից ուղարկվում են իրենց փոստային հանգույցը № 12 ձևի ցուցակի հետ միասին:

Հասցեակետերում ստացված հայտարարված արժեքով նամակները պետք է գրանցել № 7 ձևի ստացման տետրում (նկ. 13), մատնանշելով՝ 1) գրանցման հերթական համարը, 2) նամակի տեսակը (բաց կամ փակ), 3) ընդունման վայրն ու համարը, 4) ստացողի ազգանունը կամ կոգմակերպության, հիմնարկության անունը, 5) հայտարարված արժեքի գումարը, 6) վերադիր վճարի գումարը:

Հենց նույն տետրում պետք է գրանցել արժեքավոր այն նամակները, վորոնք ուղարկվում են գործակալություններին, ընդունում ստացողի անունից հետո № 7 ձևի տետրի մեջ պետք է մատնանշել այն գործակալության անունը, ուր ուղարկվում է արժեքավոր նամակը:

Հայտարարված արժեքով բաց նամակը հանձնելիս, փոստի աշխատողը ծրարը բաց է անում ստացողի ներկայությամբ, այնպես, վոր նա տեսնի:

Բացելու համար պետք է կտրել ծրարի հակառակ կողմի կափույրը: Ծրարը կափույրի ծալից կտրել չի թույլատրվում: Կնիքները պետք է մնան անխախտ: Արժեքները պետք է ստուգել ցուցակով:

Յեթե ծրարի մեջ ներդրումը ամբողջովին չկա կամ ցուցադրում մատնանշված իրերի մի մասը պակասում է, ապա այս մասին պետք է կազմել ակտ, վորը ստորագրում է ստացողը, ձեռնարկության պետը (կամ նրա տեղակալը) և կապի այն աշխատողը, վոր նամակը բացել է: Ակտին պետք է կցել ծրարը, վորովհետև քննության համար այդ ծրարը կարևոր փաստաթուղթ է հանդիսանում:

Արժեքավոր փակ նամակը հասցեատիրոջը հանձնելիս չի բացվում: Այն դեպքում, յերբ նամակի ծրարը և կնիքները վնաս-

№ № по пор.	Вид отправления	Место подачи и пода- вательский номер от- правлен.	Кому адресовано от- правление, а для нало- женн. платежа-от кого, подробный адрес отпра- вителя и время подачи отправления	Сумма объявлен- ной цен- ности		Сумма налож- платежа		Отметка о времени вы- дачи досылки или воз- вращения, время отпра- вленного платежа и № служебн. перевода
				Руб.	К.	Руб.	К.	
1	ценн. откр.	Киев, 3 № 352	Петрову	400	—	—	—	1).1—38 г.
2	ценн. закр.	Одесса, 2 № 150	Отделению госбанка	921	50	—	—	7.1—38 г.
3	ценн. откр.	Москва 9, № 391	Герасимову от мосторга, петровка, 2 3/1—38 г.	200	—	100	—	9.1—38 г.. 252
4	ценн. откр.	Загорск, Московск. № 54	Шуленковой	45	—	—	—	Дослан 6.1-38 г. в Пушкино Московск. обл. по заявлению адресата. Ст. агент Петрова

И. Т. Д.

Оставалось на 7/1
Поступило
Дослано
Выдано
Осталось

(Подпись)

№ 23. № 7 ձևի տետրի ներսի թերթը

ված են կամ պահպանում և քաշը, նամակն անմիջապես բացվում
է և կատարվում է քննություն:

Հայտարարված արժեքով նամակ ստանալիս հասցեատերը
պետք է ներկայացնի իր անձնավորութունը հաստատող փաստա-
թուղթ (փաստաթղթի մասին տես փոխադրությունների վճար-
ման բաժնում):

Արժեքավոր նամակ կորցնելու համար կապի ձեռնարկու-
թյունները պատասխանատվություն են կրում հայտարարված
արժեքի գումարի չափով:

ՍՏՈՒԳԻԶ ՀԱՐՑԵՐ

(հարցերին պատասխանեք բանավոր)

1. Հայտարարված արժեքով ինչպիսի՞ նամակներ են լինում և ինչով են նրանք տարբերվում մեկը մյուսից.
2. Ումից են ընդունվում հայտարարված արժեքով փակ նամակներ:
3. Ի՞նչ կարելի չէ ուղարկել հայտարարված արժեք ունեցող նամակներով:
4. Վերջին կարելի չէ գնահատել նամակը:
5. Առավելագույն ինչպիսի՞ քաշ է սահմանված հայտարարված արժե-
քով նամակների համար:
6. Ինչպիսի՞ գանձումներ են կատարում հայտարարված արժեքով նա-
մակներ ուղարկելու համար:
7. Վերջին է գանձվում արժեքավոր նամակները տուն հասցնելու համար:
8. Ինչպե՞ս պետք է ձեռք կերպով դրել արժեքավոր նամակի հասցեն:
9. Ի՞նչպես պետք է կազմել արժեքավոր բաց նամակի ներդրման ցուցակը:
10. Ի՞նչպես են գնահատվում հայտարարված արժեքով նամակների մեջ
ուղարկվող իրերը:
11. Ի՞նչ փաստաթղթերի հետ միասին են ուղարկում հայտարարված
արժեքով նամակները:
12. Վճիռ տետրի մեջ են գրանցվում հայտարարված արժեքով այն նա-
մակները, փորոնք ստացվել են:
13. Ի՞նչպես պետք է ձեռք կերպով բանալ արժեքավոր բաց նամակը:
14. Փոստում ինչպիսի դեպքերում են բացում հայտարարված արժեքա-
վոր նամակները:
15. Նյութական ինչպիսի՞ պատասխանատվություն է սահմանված հայ-
տարարված արժեքով նամակները կորցնելու և այդ նամակների վնասվելու
դեպքում:

ԾԱՆՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ծանրոցներով կարելի չէ ուղարկել զանազան առարկաներ:
Ծանրոցներով արգելվում է ուղարկել ուտիչ և դյուրալուծ նյու-
թեր, ոտարերկրյա վալյուտա, ԽՍՀՄ-ում շրջանառությամբ մեջ
գտնվող զրամներ, փոխադրությունների պարտատոմսեր, զանա-
զան արժեքավոր թղթեր և ամեն տեսակ հաղորդագրություններ:
Սահմանված են ծանրոցների յերկու տեսակներ՝ առանց
հայտարարված արժեքի (առանց արժեքի) և հայտարարված ար-
ժեքով (արժեքավոր):

Ծանրոցների հայտարարված արժեքը անսահմանափակ է:
Ծանրոցներում ուղարկվող առարկաները կարելի չէ գնահատել
այդ առարկաների միայն իսկական արժեքով:

Թե հայտարարված արժեքով և թե առանց արժեքի ծան-

րոցները պետք է տեղավորել ամուր պատյանի, այն է՝ արկղի, կտավի, մոմլաթի (клепка), կտորի մեջ և այլն:

Չջարդվող ամբողջական իրերը, որինակ՝ գծագրական տախտակներ, մանկական սահնակներ, դուլեր, գամբյուղներ, ճամպրուկներ և սրանց նման առարկաներ (բացառությամբ սրածայր, սուր և կտրող առարկաների), ծանրոցներով կարելի չի ուղարկել առանց արկղի կամ առանց կտորի մեջ փաթաթելու:

Այսպիսի ծանրոցների հայտարարված արժեքը 300 ուսբուլց ավելի չպիտի լինի, իսկ քաշն ու չափը պետք է լինի նույնը, ինչ վոր ուրիշ ծանրոցներին:

Այսպիսի ծանրոցների հասցեն պետք է գրել ուղարկվող առարկայի վրա կամ տախտակի կտորի վրա (бирка), վորը թելով ամուր կապվում է ուղարկվող առարկայից: Թելի ծայրերը կընքամոմով կնքում և ամրացնում են այդ տախտակին:

Փայտե և ֆաների արկղների կամ այլ տեսակ ամուր պատյանի մեջ դրված և 1,000 ուսբուլց և ավելի հայտարարված արժեք ունեցող ծանրոցները՝ պետք է անպայման փաթաթված և կարված լինեն միատեսակ և միազույն կտորի մեջ:

Ծանրոցի պատյանը պետք է լինի ամբողջական և առանց կարկատանների: Ծանրոցների փափուկ փաթեթոցը պետք է կարված լինի միազույն թելով:

Յուր, մուրաբա, ճարպանյութեր պարունակող ծանրոցները ընդունվում են միայն թիթեղե զոգված բանկաներով (բանկաները պետք է զնել փայտե արկղների մեջ, իսկ արկղի պատերի և բանկաների միջև դատարկ մնացած տեղերը պետք է լցնել թեփ կամ հեղուկ ներծծող վորակե այլ նյութ:

Թղթից, ճիւղպից կամ մառլայից պատրաստված պատյանի մեջ փաթաթված ծանրոցներ փոստը չի ընդունում:

Վորպես բացառություն կազմակերպություններին ու հիմնարկություններին տպագրված նյութեր պարունակող ծանրոցներն ընդունվում են ամուր թղթից կամ ճիւղպից պատրաստած պատյանի մեջ փաթաթված: Այսպիսի ծանրոցների քաշը 2 կիլոգրամից ավելի չպետք է լինի, իսկ յեթե այդ ծանրոցները յերկու հակադիր ծայրերից ունեն ֆաներայից շինած տախտակներ և կապված են լավ շաղապտով, ապա այդ դեպքում ծանրոցը կարող է ունենալ մինչև 8 կիլոգրամ քաշ:

Հայտարարված արժեքով ծանրոցները կապում են մեկ ամբողջական շաղապտով:

Շաղապտը պետք է այնքան քիփ ձգել, վոր այն հնարավոր չլինի հանել կամ տեղից շարժել:

Հատման տեղերում շաղապտը պետք է ունենա ամուր հանգույց: Շաղապտի ծայրերը պետք է կապել կրկնակի հանգույցով:

Կտրոմ փաթաթված ծանրոցները կապելիս ծանրոցի բոլոր կողմերից շաղապտը պետք է անցկացնեն պատյանի տակից:

Արժեքավոր և առանց հայտարարված արժեքի ծանրոցների կարերը ուղարկողը կարող է կնքել իր կնիքով: Արժեքավոր ծանրոցների կարերը, յեթե ուղարկողի կողմից չեն կնքված, ապա պետք է փոստում անպայման կնքել:

Բոլոր ծանրոցների քաշը 20 կիլոգրամից ավելի չպետք է լինի, անկախ նրանից, թե ինչ է ուղարկվում և ով է ուղարկողը: Այս վերաբերում է բոլոր ծանրոցներին, այդ թվում և կապի որդանների կողմից ուղարկվող ծանրոցներին:

Ծանրոցների չափերը ավելի չպետք է լինեն հետևյալ մեծություններից.

ա) յերկարությունը. լայնությունը և բարձրությունը 70 սանտիմետրից կամ՝

բ) յերկարությունը՝ 1 մետրից և լայնությունն ու բարձրությունը՝ 50 սանտիմետրից:

Ծանրոցների համար նվազագույն քաշ և չափեր չեն սահմանված: Ծանրոցը, վորքան ուզում է նրա ծավալը փոքր լինի, կարելի չի ընդունել, բայց այն պայմանով, վոր ստացողի և ուղարկողի հասցեները հնարավոր լինի գրել ծանրոցի պատյանի վրա:

Ծանրոցի համարը, քաշը և ընդունման վայրի անունը ծանրոցի պատյանի վրա մատնանշում է ծանրոց ընդունող աշխատակիցը:

Ծանրոցներ ուղարկելու համար գանձում են հետևյալ վճարները.

ա) ապահովագրական վճար՝ այն չափով, ինչ չափով վոր գանձվում է փոխադրություններ ուղարկելու համար:

բ) կշռավճար՝ ներքևում ցույց տրված սակագներով: Ծանրոցներ ուղարկելու կշռավճարը վորոշելու համար ԽՍՀ Միության տերիտորիան բաժանել են հետևյալ գոտիների.

Առաջին գոտի. Աբխազական ԱՍՀ, Աջարական ԱՍՀ, Ադիգեյական ԱՄ, Ադրբեջանական ԱՍՀ, Հայկական ԱՍՀ, Արխանգելսկի մարզ, Բաշկիրական ԱՍՀ, Վիննիցայի մարզ, Վիտեբսկի

մարզ, Վոլոգդայի մարզ, Վոբոռնսկի մարզ, Վորոշիլովգրադի մարզ, Գոմելի մարզ, Գրորևո մարզ, Վլադյակաև ԽՍՀ, Դաղստանի ԱԽՍՀ, Դնեպրոպետրովսկի մարզ, Ժիտոմիրի մարզ, Իվանովոյի մարզ, Կաբարդինո-Բալկարական ԱԽՍՀ, Կալինինի մարզ, Կալինինական ԱԽՍՀ, Կամենեց-Պոդոլսկի մարզ, Կարաչայական ԱՄ, Կարելական ԱԽՍՀ, Կիևի մարզ, Կիրովսկի մարզ, Կոմի ԱԽՍՀ, Կրասնոդարի յերկրամաս, Դրիմի ԱԽՍՀ, Կոլբերշեի մարզ, Կոլբսկի մարզ, Լենինգրադի մարզ, Մարիական ԱԽՍՀ, Մինսկի մարզ, Մոգիլյովի մարզ, Մոլդավական ԱԽՍՀ, Մորզովական ԱԽՍՀ, Մոսկվայի մարզ, Մուրմանսկի մարզ, Լեոնային Դարաբադի ԱՄ, Նախիջևանի ԱԽՍՀ Մերձվոլգյան գերմանացիներին ԱԽՍՀ, Նեկոլաևի մարզ, Ունիկիձեյի յերկրամաս, Ույուլի մարզ, Պերմի մարզ, Պոլեսյեյի մարզ, Պոլտավայի մարզ, Ռոստովի մարզ, Ռյադանի մարզ, Սաբատովի մարզ, Սվերդլովսկի մարզ, Հյուսիս-Ոսեթական ԱԽՍՀ, Սմոլենսկի մարզ, Ստալինգրադի մարզ, Ստալինոյի մարզ, Տամբովի մարզ, Թաթարական ԱԽՍՀ, Տուլայի մարզ, Ուզմուրտական ԱԽՍՀ, Խարկովի մարզ, Չելյաբինսկի մարզ, Չերքեզական ԱՄ, Չերնիգովի մարզ, Չեչենո-Խոզուշական ԱԽՍՀ, Չկալովի մարզ, Չուխաշական ԱԽՍՀ, Հարավ-Ոսեթական ԱՄ, Փարոսլավի մարզ:

Յերկրագոյ գոտի. Ակայուբինսկի մարզ, Ալմա-Աթայի մարզ, Ալտայան յերկրամաս, Բուխարայի մարզ, Արևելյան Ղաղախստանի մարզ, Լեռնային Բաղաշխանի մարզ, Գուբիի մարզ, Արևմտյան Ղաղախստանի մարզ, Կարադանդայի մարզ, Կարակալպակահան ԱԽՍՀ, Էրզըլ-Որդայի մարզ, Կերգիզական ԽՍՀ, Կուստանայի մարզ, Նովոսիբիրսկի մարզ, Ոյրթական ԱՄ, Ռոսիի մարզ, Պավլոդարի մարզ, Սամարղանդի մարզ, Հյուսիսային Ղաղախստանի մարզ, Տաջիկական ԽՍՀ, Տաշկենտի մարզ, Թուրքմենական ԽՍՀ, Ֆերգանայի մարզ, Խորեզմի մարզ, Հարավային Ղաղախստանի մարզ:

ՅԵՐԵՐԱԳ զԱՏԻ. ԲՈՒՐՅԱԹ-ՄՈՆՂՈՎԱՆԻ ԱԽՍՀ, ԻՐԿԵՆԱՆԻ ԺԱՐԳ,
ԿՐԱՏՆՈՂԱՐՏԻԿ ԵՐԵՂՐԱԺԱՍ, ԽԱԿԱՍՏԿԱՆ ԱՄ, ՉԻՏԱՅԻ ԺԱՐԳ:


Զարգաց գոթի. Ամուրի մարզ, Հրեական ԱՄ, Կամչատ-
կայի մարզ, Նիժնեամուրի մարզ, Ուսուրիի մարզ, Պաբարովսկի
մարզ, Յակուտական ԱԽՄՀ:

Ծանրոցի վրայի հասցեն պետք է գրել թանաքով կամ քիմիական մատիտով՝ թրջած պատյանի վրա: Ձնջումներ և ուղղումներ անել չի թույլատրվում: Ծանրոցների հասցեյում կրճատված անուններ գրելը թույլատրվում է միայն հանրածանոթ որ-


գանձերի և հիմնարկների համար, ինչպես որինակ՝ Ժողովուրդին, Համկ(բ)Կ ԿԿ, յերկրագործկոմ, շրջագործկոմ, գյուղատրհուրդ և այլն։ Հասցեն պետք է գրված լինի անպայման պատյանի վրա (հասցեն ծանրոցի վրա կարել կամ փակցնել չի թույլատրվում)։ Յեթի ծանրոցն արժեքավոր է, ապա հասցեն պետք է գրել այսպես. «արժեքավոր այսքան ուրբուր» («ценная на столько-то рублей»), իսկ յեթի առանց հայտարարված արժեքի յե, ապա պետք է գրել «առանց հայտարարված արժեքի» («без объявленной ценности»)։

Ճանրոցի քաշի համար	Առաջին և յերկրորդ գոտիների ներսում		Յերրորդ և չորրորդ գոտիների ներսում		Կից գոտինե- րի միջև		Մեկ գոտու վրայով		Առաջին և չորրորդ գոտիների միջև	
	ս.	կ.	ս.	կ.	ս.	կ.	ս.	կ.	ս.	կ.
Մինչև 2 կիլոգրամ . .	1	50	2	50	4	—	5	—	6	—
2-ից մինչև 4 կիլոգրամ .	3	—	3	50	5	50	6	—	10	—
4-ից » 6 »	4	—	5	50	8	—	10	—	15	—
6-ից » 8 »	5	—	6	50	15	—	13	—	20	—
8 կիլոգրամից ավելի յուրա- քանչյուր լրիվ կամ վռշ լրիվ կիլոգրամի համար .	—	75	1	25	2	—	2	50	3	—

Հայտարարված արժեքը մատնանշվում է թվանշաններով և տառերով (նկ. 24 և 25):



Նկ. 24. Առանց արժեքի ծանրոցի հասցեյի նմուշը



Նկ. 25. Արժեքավոր ծանրոցի հասցեյի նմուշը

Ուղարկողը ծանրոցին պետք է կցի հատուկ բլանկ, վորը կոչվում է ուղեկցող հասցե: Ուղեկցող հասցեն ուղարկվում է ծանրոցի հետ միասին և պետք է ճշտիվ համապատասխանի ծանրոցի վրայի հասցեյին:

Հայտարարված արժեքով ծանրոցի ուղեկցող հասցեյի բլանկը տպված է կարմիր ներկով, իսկ սովորական ծանրոցներինը՝ սև ներկով (նկ. 26):

Ծանրոցին կցված ուղեկցող հասցեն ոգտագործվում է հասցեատիրոջը ծանուցելու համար և փոստի համար ծառայում է վորպես փաստաթուղթ, վորի վրա հասցեատիրը ստորագրում է ծանրոցը ստանալու մասին:

Ուղեկցող հասցեյի բլանկը պետք է գրել թանաքով: Բլանկի վրա ուղղումներ ու ջնշումներ անել չի թույլատրվում:

Բաժանմունքներում ընդունված ծանրոցները պետք է գրանցել № 1 ձևի տետրում, իսկ գործակալութուններում ընդունվածները՝ № 1-ա ձևի տետրում: Գրանցումը կատարվում է պատճենահան թղթի միջոցով: Անդորրագիրը (առաջին որինակը) տրվում է ուղարկողին, իսկ պատճենը մնում է տետրում:

Ծանրոցի պատյանին փոստը պետք է փակցնի № 2 ձևի պիտակ (ярлык), վորի վրա պետք է նշել՝ ծանրոցի համարը, ձեռնարկության, ընդունման վայրի անունը, ծանրոցի քաղը և

НКСвязи СССР		НКСвязи СССР	
ТАЛОН к посылке с объявленной ценностью на 100 р. — к. От кого Куликова Сидора Петровича Адрес г. Меленки, Ивановской обл., Советская д. 24, кв. 2		наименование и адрес предпр. связи места выдачи ИЗВЕЩЕНИЕ № 320 о получении посылки с объявл. ценностью на 100 р. — к. Куда Москва, центр, Потаповский пер. 9., кв. 7 Кому Шиловой Тамаре Петровне	
Письменное сообщение на обороте. Наркомсвязи ф. № 118		При получении посылки следует внести: почтов. сбор — р. — к. Для получения посылки предъявить это извещение и паспорт. За хранение взимается плата через три дня после получения.	
Народный Комиссариат Связи Союза ССР		№ _____ по кн. ф. 7 куда _____	
АДРЕС К ПОСЫЛКЕ № 320 с объявленной ценностью сто руб.		заполняет приемщик	
на _____ Куда Москва, центр. Потаповский пер., дом 9, кв. 7 Кому Шиловой Тамаре Петровне От кого Куликова Сидора Петровича Адрес г. Меленки, Ивановск., Советская, 24, кв. 2		шт. места подачи	
В е с _____ кг.		шт. места получения	
СБОРЫ Весовой р. к. Страховой " За авио " Итого "		заполните адрес, талон и извещение Исправления не допускаются	
Наркомсвязи ф. № 118		Наркомсвязи ф. № 118	

Նկ. 26. Արժեքավոր ծանրոցի ուղեկցող հասցեն


պետք է խփել որացուցային շտեմպել: Առանց հայտարարված արժեքի ծանրոցներին փակցնում են սպիտակ գույնի պիտակ, իսկ արժեքավոր ծանրոցներին՝ կարմիր գույնի պիտակ (նկ. 27):

Ձև № 2

Հայտարարված արժեքով	Առանց հայտարարված արժեքի
№ 293	№ 293
МЕЛЕНКИ	МЕЛЕНКИ
Ивановской области	Ивановской области
ШТ.	ШТ.
Вес 5 кгр. 200 гр.	вес 5 кгр. 200 гр.

Նկ. 27. № 2 ձևի պիտակ

Կապի ձեռնարկությունները պարտավոր են ընդունել ծանրոցներ, վորոնց մեջ կան չափող և ճիշտ գործիքներ, ապրիլում պեր և այլն: Այդպիսի ծանրոցներին պետք է փակցնել կարմիր գույնի հատուկ պիտակ՝ «զգույշ» («осторожно») մակագրությամբ (նկ. 28):



Նկ. 28. «Զգույշ» պիտակի ձևը

Բոլոր ծանրոցները նշանակման վայրն են ուղարկվում № 16 ձևի բեռնագրով (նկ. 29):

3000 ուլբուլց ավելի հայտարարված արժեք ունեցող ծանրոցները կոչվում են մեծարժեք ծանրոցներ:

Ձև № 16

НАКЛАДНАЯ на почту, отправ- ленную из полу- ченную в	шт. отправ- ления	Общий счет вещам	
Адрес _____ куда	шт. получе- ния	Наименование вещей	
		Кожаных вещей.	
		Мешков } страхов.	
		} прочих	
		Посылок . . .	
		Ценных писем и	
		ценных п. п. .	
		Правительст. п. п.	
		Международ. п. п.	
		Итого . . .	
Куда или откуда, а для переходящих—то и другое	Наимено- вание предметов	№ №	ценность руб. к.
			Руб. К.

Նկ. 29. № 16 ձևի բեռնագիր

Մեծարժեք ծանրոցները նշանակման վայրերն են ուղարկվում անպայման փոստային պայուսակներով, պարկերով, բաուլներով մեջ զրկած:

Նշանակման վայրերում պայուսակները, պարկերը, բաուլները դնում և կշռում են, ինչպես նաև ստուգում են ծանրոցների պատյանները, քաշը և առաքման համար գանձված վճարի ճշտությունը: Յեթե ծանրոց ընդունողը փոստային վճարը գանձել է տարիքով սահմանվածից պակաս, ապա պակսորդը (թերագանձույթը) գանձվում է մեղավոր աշխատակցից: Ընդունման վայրը ուղարկվում է թերագանձման մասին հատուկ տեղեկաթերով: Կապի ձեռնարկությունը տեղեկաթերով ստանալով, փակցնում է նրա վրա թերագանձման գումարի չափ նամականիշեր, այդ նամականիշերը մարում և որացուցային շտեմպելով և հետ է վերադարձնում ուղեկցող հասցեյին կցելու համար:

Կապի գրասենյակներում և բաժանմունքներում ստացված ծանրոցները գրանցվում են № 7 ձևի գրքի մեջ: Հանգուցային

ձեռնարկութիւններէն ծանրոցները գործադրութիւններն են ուղարկում № 12-ա ձևի ցուցակի մէջ գրանցելով:

Ծանրոցը հանձնելու համար սահմանված և նույն կարգը, ինչ վոր փոխադրութիւնների համար:

Հասցեները տանը չլինելու դեպքում մինչև 50 ուրլի հայտարարված արժեք ունեցող և առանց հայտարարված արժեքի ծանրոցները կարելի չի հանձնել հասցեատիրոջ ազգականներին (կնոջը, ամուսնուն, հորը, մորը, յեղբորը, քրոջը, չափահաս զավակներին): Այդպիսի դեպքերում ազգականը ուղեկցող հասցեյի վրա պետք է գրի, վոր ծանրոցը ստացել է այսինչին հանձնելու համար և պետք է նշի իր և ստացողի ազգականական կապը:

Ստացված ծանրոցները փոստում պահվում են ձրիաբար չորս օր, հաշված ծանուցագիրը հանձնելու օրից (ծանուցագիրը հանձնելու օրը մտնում է այդ ժամկետի մէջ):

Չորս օրից ավելի պահելու դեպքում յուրաքանչյուր ծանրոց պահելու համար գանձվում է՝

Հանրապետական, յերկրամասային և մարզային կենտրոններում	Այլ վայրերում
ա) Մինչև 5 օր՝ որական 50 կ.—	15 կոպ.
բ) Մինչև 10 օր՝ որական 1 ու.—	30 կոպ.
գ) 10 օրից ավելի՝ որական 3 ու.—	1 ուրլի

Կարմիր բանակայիններին և կարմիր նավաստիներին հասցեագրված ծանրոցները պահելու համար վճար չի գանձվում:

Ծանրոցը պահելու համար ստացողից գանձված գումարի դիմաց ուղեկցող հասցեյի բնակիչն պետք է փակցնել նամակաշիշեր և մարել որացուցային շտեմպելով:

Յեթն ծանրոցից հեղուկ և հոսում, ապա այդպիսի ծանրոցն անհապաղ պետք է բանալ: Փչացած ներդրումը վոշնչացվում է, իսկ մնացածը նորից կապվում և ուղարկվում է հասցեատիրոջը: Ծանրոցի բացման մասին պետք է կազմել մանրամասն ակա, վորի պատճենը պետք է կցել ուղեկցող հասցեյին (ուղեկցող հասցեյի վրա նշվում է, վոր ծանրոցը բացվել է):

Ծանրոցը փնտրելու մասին տրվող դիմումները ուղարկողներից և ստացողներից ընդունվում են, ծանրոցն ընդունելու օրից հաշված, վեց ամսվա ընթացքում:

Ծանրոցները կորցնելու համար կապի օրը՝ անընդմեջ նյութապես պատասխանատու չեն, այն է՝
 ա) առանց արժեքի ծանրոցի համար վճարվում են 25 ուրլի,
 բ) արժեքավոր ծանրոցի համար՝ հաշվառարված արժեքի գումարը:

Ծանրոցը վնասվելու կամ նեղ գրման մի մասը պակասելու դեպքում փոխհատուցման չափը վճարվում է ներդրման պակասած կամ վնասված մասի համեմատ:

Առանց հայտարարված արժեքի ծանրոցի ներդրման մի մասը վնասվելու կամ պակասելու դեպքում փոխհատուցման չափը վորոշում են, յեղևելով 25 ուրլուց:

Ծանրոցը կորցնելու, պակասելու և վնասվելու համար կամ ներդրման պակասելու, համար կապի աշխատողները նյութապես պատասխանատու չեն այն չափով, ինչ չափով կապի օրգանները պատասխանատու չեն ուղարկողի առաջ: Բացի նյութական պատասխանատվութիւնը, կապի մեղավոր աշխատողները կարող են յենթարկվել սակ կարգապահական կամ քրեական պատասխանատվութիւն:

Ս Տ Ո Ւ Գ Ի Չ Հ Ա Ր Ց Ե Ր

(Հարցերին պատասխանեցք բանավոր)

1. Ինչպիսի՞ ծանրոցներ են լինում:
2. Ծանրոցի արժեքը վորքան կարելի չի հայտաբարել:
3. Ինչպիսի՞ կարգ է սահմանված հայտարարված արժեքով ծանրոցներով ուղարկվող առարկաների գնահատման համար:
4. Ինչպիսի՞ պայմաններով է թույլատրվում ծանրոցներ ուղարկել:
5. Ինչպիսի՞ առավելագույն քաշ և չափ պիտի ունենան ծանրոցները:
6. Առաքման ինչպիսի՞ վճար է գանձվում և ինչ չափով:
7. Ինչպիսի՞ պետք է գրել ծանրոցների հասցեն:
8. Ի՞նչ է արգելվում ուղարկել ծանրոցներով:
9. Վճր տետրի մէջ են գրանցվում ընդունված ծանրոցները:
10. Ծանրոցներին ինչպիսի՞ տարբերիչ պիտակներ են փակցնում այդ ծանրոցներն ընդունելիս:
11. Վճր ծանրոցներն են կոչվում մեծարժեք և ի՞նչ կարգով են նրանք ուղարկվում:
12. Ինչպիսի՞ կարգ գոյութիւն ունի ստացման վայրերում ծանրոցները ղննելու համար:
13. Վճր գրքի մէջ են գրանցվում ստացված ծանրոցները:
14. Ի՞նչ փաստաթղթերով են ծանրոցներն ուղարկվում հանգույցներից, գործակալութիւններին և գործակալութիւններից հանգույցներին:
15. Ի՞նչ կարգ է սահմանված ծանրոցներ հանձնելու վերաբերյալ:

16. Ինչքան և դանձվում ծանրոցները պահելու համար:

17. Ինչպե՞ս պետք է վարվել ծանրոցի հետ, յեթե նրանից հեղուկ է հոսում:

18. Ուղարկողներից վորքե՞ն ժամանակվա ընթացքում են դիմումները ընդունվում ծանրոցները հտանալու մասին:

19. Վորքե՞ն և վճարվում սովորական ծանրոցը կորցնելու դեպքում և վորքե՞ն հայտարարված արժեքով ծանրոցը կորցնելու դեպքում:

ՎԵՐԱԴԻՐ ՎՃԱՐՈՎ ՓՈՍՏԱՅԻՆ ԱՌԱՔՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Փոստի միջոցով մեծ քաղաքներից գյուղերը, կոլտնտեսու-
թյունները, շրջանային կենտրոնները ուղարկվում են գրքեր,
կուլտուրական և տնտեսական առօրյա գանադան առարկաներ:
Գրախանութից գիրք կամ ունիվերսալից վորե՛կ իր դուրս գրելիս
շատ դժվար է նախորոք վորոշել դուրս գրվող առարկայի գինը:
Ուստի գնողները խնդրում են ուղարկել իրենց համար այս կամ
այն առարկան այն պայմանով, վոր անհրաժեշտ գումարը վճա-
րեն ծանրոցն ստանալիս: Նման բոլոր դեպքերում ծանրոցը
կամ բանդերոլը կարելի չե ուղարկել վերադիր վճարով:

Այն վճարը, վոր հասցետերը պետք է մուծի ծանրոցը
ստանալիս, կոչվում է վերադիր վճար: Վերադիր վճարի գումարը
փոխադրվում է ուղարկողին, նրա մատնանշած հասցեյով:

Վերադիր վճարով նամակներ, բանդերոլներ և ծանրոցներ
փոստն ընդունում է ուղարկելու համար միայն այն դեպքում,
յեթե դրանք գնահատված են ուղարկողի կողմից: Այդպիսի
փոստային առաքման հայտարարված արժեքը չի կարող պակաս
լինել վերադիր վճարի գումարից

Առաջին օրինակ: 100 ռ. վերադիր վճարով ծանրոցը պետք
է գնահատվի 100 ռ. վոչ պակաս, բայց ուղարկողի հայեցողու-
թյամբ կարելի չե գնահատել 100, 200, 300 ռուբլի և այլն:

Յեղկոտդ օրինակ: 15 ռ. վերադիր վճարով բանդերոլը պետք
է գնահատվի 15 ռ. վոչ պակաս, բայց կարելի չե գնահատել 20,
30 ռուբլի և այլն:

Նամակների, բանդերոլների և ծանրոցների վերադիր վճա-
րի գումարը չի սահմանափակվում:

Վերադիր վճարով առաքումը փոստին հանձնելիս ուղար-
կողին իրավունք է վերապահվում պահանջել վորպեսզի ստա-

ցողից դանձված վերադիր վճարն ուղարկվի նրան փոստով կամ
հեռագրով: Վերադիր վճարը կարելի չե ուղարկել միայն առա-
քումն ընդունող վայրը և միայն անձամբ ուղարկողին:

Վերադիր վճարով փոստային առաքման հասցեյի վրա
նշվում է՝ «Վերադիր վճար փոստով (կամ հեռագրով) 15, — տաս-
նհինգ ռուբլի» («наложенный платеж почтой (или теле-
графом) 15 рубл. — пятнадцать рубл.,»):

Որինակելի հասցե

Наложённый платёж

Ценная бандероль на 15 рублей (пятнадцать рублей).

Наложённый платёж почтой 15 рублей (пятнадцать рублей).

Лиски

Воронежской области,
улица Ленина, д. 17, кв. 4.

Петрову Василию Ивановичу

Адрес отправителя: Москва, 9,

улица Горького, 40, кв. 1.

Магазин № 59 Московского отделения Государственного
издательства.

Текущий счёт № 6275 в Московской конторе Госбанка

Վերադիր վճարով փոստային առաքումներն ընդունում,
մշակում, ուղարկում և հանձնում են նույն ձևով, ինչ և արժե-
քավոր առաքումները:

Վերադիր վճարով ծանրոցներ ընդունելիս, յեթե դրանք
թղթե պաշտոնով են, պետք է պահպանել, վորպեսզի յուրաքանչ-
յուր այդպիսի ծանրոցի մեջ դրվի հասցեյի յերկրորդ օրինակը,
վորի միջոցով անհրաժեշտության դեպքում կարելի չե պարզել
ուղարկողի և ստացողի հասցեն:

Վերադիր վճարով արժեքավոր նամակներին և բանդերոլ-
ներին ուղարկողը պետք է կցի լրացրած հատուկ բլանկ՝ վերա-
դիր վճարի գումարը փոխադրելու համար:

Վերադիր վճարով ծանրոցների համար պետք է լրացնել
ուղեկցող հասցե, վորն ունի հատուկ բլանկ՝ վերադիր վճարի
փոխադրության համար (նկ. 30):

Н.К. Связи

СССР



ТАЛОН

К посылке

с объявл. ценностью

на 100 р. — К.

с наложен. платежом

на 100 р. — К.

ОТ КОГО Афониной

Татьяны Николаевны

Адрес г. Пушкино Московск.

поселок
„Заветы Ильича“,
дом 8.Письменное сообщение на
обороте

Н. К. Связи

СССР



наименование и адрес предприятия связи

Извещение №
о получении посылки

с объявл. ценностью

на 100 р. — к.

с наложен. платежом

на 100 р. — к.

Куда г. Руза, Московск. обл.,

адрес получателя

Октябрьская ул., дом 15.

Кому Шалаеву Александру
Алексеевичу

От кого Афониной Т. Н.

При получении посылки следует внести.

налож. плат. 100 р. — к.

почтов. сбор. — р. — к.

и предъявить это извеще-
ние и паспорт.За хранение посылки
взыскивается плата

Народный Комиссариат



Связи Союза ССР

№

по кн. ф. 7

куда

заполняет
приемщик

АДРЕС К ПОСЫЛКЕ № 350

с объявленной ценностью

на сто рублей

сумма рублей прописью

С налож. платежом на сто рублей

Куда г. Руза, Московской обл., Октябрьская ул. д. 15

адрес получателя

Кому Шалаеву Александру Алексеевичу

От кого Афониной Татьяны Николаевны

Адрес г. Пушкино, Моск., поселок

„Заветы Ильича“, дом 8

В е с

2 кг. 650 гр.

СБОРЫ

Весовой

руб.

3

коп.

—

Страховой

1

—

За налож. платеж

1

—

За авио

—

—

Итого

5

—

шт. места
получ.

Наркомсвязи ф. № 117

заполните адрес, талон и извещение

Исправления не допускаются

Նկ. 30. Փերագիր լճարով ծանուցի ուղեկցող հասցեն

Н. К. Связи

СССР

ТАЛОН

к переводу по почте наложен-
ного платежа

на 100 р. к —

Куда г. Пушкино Моск.

адрес получателя перевода

обл., поселок „Заветы Ильича“,
дом 8.

Кому Афониной Татьяне

наименование получателя перевода

Николаевне

шт. места подачи

шт. места получ.

Заполнение пояснения на обор.
обязат.

Н. К. Связи

СССР

наименование и адрес предприятия связи

№ 248

по тетр. ф. 5

№

по кн. ф. 7а

ИЗВЕЩЕНИЕ о переводе по
почто наложенного платежа

на 100 р. — к.

Куда г. Пушкино, Московской
обл., поселок „Заветы Ильича“,
дом 8.

Кому Афониной Татьяне

Николаевне

шт. места подчм.

шт. места получ.

Народный комиссариат



Связи Союза ССР

№

по кн. ф. 7-а

ПЕРЕВОД ПО ПОЧТЕ № 248

по тетр. ф. 5

наложенного платежа

на 100 Р. — К. Сто рублей

рубли прописью, коп. цифрами

Куда г. Пушкино, Московской обл.,

адрес

поселок „Заветы Ильича“

дом 8

Кому Афониной

Татьяне Николаевне

ШИЛОВ

подпись
приемщика

№

по реестр. ф. 10

Исправления не допускаются

Վերադիր վճարով առաքումներն ուղարկելու համար, բացի կշռային և ապահովագրական վճարները, գանձում են լրացուցիչ վճար՝ վերադիր վճարի գումարն ուղարկողին փոխադրելու համար: Այս վճարը գանձվում է նույն չափով, ինչ չափով և փոստով ուղարկվող փոխադրութունների համար (իսկ յեթև ուղարկողը ցանկանում է ստանալ վերադիր վճարը հեռագրով, ապա վճարը գանձվում է վորպես հեռագրական փոխադրության համար):

Առաջին օրինակ: 40 ռուբլու վերադիր վճարի համար պետք է գանձել 50 կ.:

Յերկուրդ օրինակ: 25 ռուբլու վերադիր վճարի համար պետք է գանձել 30 կոպ. և այլն:

Ապահովագրական և վերադիր վճարի համար գանձվող գումարները կախումն ունեն առաքման հայտարարված արժեքից և վերադիր վճարի գումարներից:

Որինակ. 300 ռ. հայտարարված արժեքով ծանրոցի համար, վորի վերադիր վճարն է 200 ռ., պետք է գանձել՝ ապահովագրական վճար 300 ռուբլուց 3 ռ. և վերադիր վճարի համար 200 ռուբլուց—2 ռ., ընդամենը՝ 5 ռ.:

Վերադիր վճարով արժեքավոր բանդերովի կշռավճարը գանձվում է բանդերողների համար սահմանված սակագնով:

ԽՍՀ Միության Ժողկոմխորհի 1935 թ. ոգոստոսի 26-ի վորոշման համաձայն կապի որդանները պատասխանատու յեն փոստային առաքումների վորոշ տեսակների հանձնումը ուղացնելու համար:

Հայտարարված արժեքով փոստային առաքումների, այն է՝ վերադիր վճարով արժեքավոր նամակների, ծանրոցների և բանդերողների հանձնումը կապի ժողկոմատի սահմանած ժամկետներից ավելի քան 48 ժամ ուղացնելու համար փոստը վճարում է որական 3 ռուբլի, բայց վոչ ավելի քան 10 ռ. յուրաքանչյուր առաքման համար:

Որենքով սահմանված փոխհատուցում ստանալու իրավունք ունեն ուղարկողը և ստացողը՝ նայած թե նրանցից ով կներկայացնի փոստային անդորրագիրը: Այս իրավունքը պահպանվում է, փոստային առաքումն ընդունելու որից հաշված, վեց ամսվա ընթացքում:

Կորցրած փոստային առաքման համար փոխհատուցում վճարելիս վերադարձնում են նաև այդ առաքումն ուղարկելու համար գանձված բոլոր վճարները:

ՍՏՈՒԳԻԶ ՀԱՐՑԵՐ

(Հարցերին պատասխանեցեք բանավոր)

1. Ինչպիսի փոստային առաքումներ կարելի յե ուղարկել վերադիր վճարով:
2. Վորքան կարող ե լինել վերադիր վճարի գումարը:
3. Ինչպիսի վճար ե գանձվում վերադիր վճարների համար



Յ Ա Ն Կ

Յ-րդ առաջադրություն

ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

	Էջ
Դրամական փոխադրությունների մասին	3
Խնչպես պետք է ընդունել փոխադրությունները	4
Խնչպես պետք է ուղարկել փոխադրությունները	12
Խնչպես պետք է մշակել և ուղարկել այն փոխադրությունները, վորոնք ընդունված են կոնտրոլ կնիք չունեցող բաժանմունքներում և գործակալություններում	14
Խնչպես պետք է մշակել այն փոխադրությունները, վորոնք ընդունված են ծածկագիր չունեցող բաժանմունքներում	17
Խնչպես պետք է փոստային հանգույցում մշակել այն փոխադրությունները, վորոնք ստացված են կոնտրոլ կնիք չունեցող բաժանմունքներից և գործակալություններից	18
Խնչպես պետք է փոխադրությունները հանգուցային ձեռնարկություններից ուղարկել կոնտրոլ կնիք չունեցող բաժանմունքներն ու գործակալությունները	19
Խնչպես պետք է մշակել ու հանձնել ստացված փոխադրությունները	21
Ստուգելի հարցեր	28

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

Փոխադրությունները պահելու ժամկետների մասին, այդ փոխադրությունները վերառաքելու և վերադարձնելու մասին և հասցեները փոխելու մասին	30
Զբաղված փոխադրությունների և այդ փոխադրությունների պահելու մասին	37
Փոխադրությունները չստանալու ատթիվ ներկայացվող պրետենզիաների մասին	37
Կապի օրգանների պատասխանատվությունը ընդունված փոխադրությունների համար	41
Քննչական օրգանների կողմից փոխադրությունները գնահետ, հանելու և հանձնումը կատարելու կարգի մասին	43

Փոխադրական փաստաթղթերը պահելու կարգի և ժամկետների մասին	45
Փոխադրական գումարների համալրումների ու ավելցուկների և այդ գումարները պահելու նորմաների մասին	45
Փոխադրական գումարներ պահելու և ոտուգելու կարգի մասին	48
Կապի բաժանմունքներից փոխադրական հաշվետվությունը ոտուգման ուղարկելու մասին	50
Ստուգիչ հարցեր	50

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍ

Հայտարարված արժեքով նամակների մասին	51
Ստուգիչ հարցեր	57
Ծանուցանելի մասին	57
Ստուգիչ հարցեր	
Վերադիր վճարով փոստային առաքումների մասին	68
Ստուգիչ հարցեր	73

24.086